



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՏՕԲԹ. Կ. Յ. ՓԱՇԱՅԵԱՆ-ԻԱՆ

ՎԻՊԱԿԱՆ ՀԱԻՆՔԱԾՈՅ

**ՃԱԿԱՏԱԳԻՐ**

ՎԻՊԱԿ III

ԳԻՆՆ Է

1 ՂԻՈՒՇ ՈՂՋ

10 ԿՈՊԷԿ

25 ՍԱՆԹԻՄ

**1906**

ՏԳՈՐԱՆ ԿԱՄԳԷԹԱ  
(Ք. ՓԱՇԱՅԵԱՆ)

ԱՂԷՔՍԱՆԴՐԻԱ  
(ԵԳԻՊՏՈՍ)

891. 99

ԳՐ-22

ԲՆԴԱՐՁԱՅ  
 ԳՊՐՈՅՈՒՄԱՆ ԱՌՈՂՋԱԳԱՀՈՒԹԻՒՆ  
 120 Պատկերներով  
 (Էջ 679)

ԳԻՆՆ Է 15 ՖՐԱՆՔ

Հեղինակաւոր անձերու և Մամուլին վկայութեամբը եր տեսակին մէջ մեր մէջ հրատարակած մէկ հատիկ կարեւոր գործն է այս :

Ուսուցիչները, ծնողները և առհասարակ երախաներու կրթութեամբ և դաստիարակութեամբ հետաքրքրուող և անոնց առողջութեան մասին հոգածու գտնուող ամեն անհատ, պարտաւոր են օրինակ մը ունենալ այս գրքէն իրենց գրադարանին մէջ:

Մի՛ ըսէք թե կարգալիք օգտակար գրքեր չունենք:  
**ԿԱՐԴԱՑԷՔ**

**ԲՆԴԱՐՁԱԿ ԳՊՐՈՅԱԿԱՆ  
 ԱՌՈՂՋԱԳԱՀՈՒԹԻՒՆԸ**

ԱԳԱԳԱՅԻՆ ՊԵՏԻ ՀՐԱՏԱՐԱՍՈՒՄ

Մեր Գիւղացիներուն Առողջապահութիւնը:  
 Գիտական հատարածոյ:

Բժշկութիւնը Պարսկաստանում Ֆրանսերէն):

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԵՆՏՐՈՆ

391 99 **ՃԱԿԱՏԱԳՐԱԾ**  
 Կ. 22  
 1922  
 Մ. ԱՅԱՍԻ ՅԱԿԱՆՎՈՒՆ

1362

Տարւոյի մէջ օրեր կան, որ մարդու ապագան առհմանելու կոչումը տնին. լաւ կամ վատ, մարդու կը պարտաւորի կրել այդ մէկ օրւան դատաւճախի հետեանքները ցկեանս. դատապարտութիւն մըն է այս, և այդ դատապարտութիւն անցեալին ու ներկային վրայէն առաւանելով կը կազմէ ճակատագրի բը...:

Չայիւր առ յաւետ կը փայլին այն գէճքերու շրջոյ, որոնց ճակատագիրը լաւ է, իսկ անդունդներու և գերեզմաններու շուրջը օրտի տխրագոյնցիկ հառաջները կը խառնան գառն արտասուքներու, երբ վատ է այն...:

Ապագայ տուերդ ճակատագրի, կողմս երբեմն փակելի ամուսնութեան քետուփին մէջ, և այն որ քու առաջին թիւդ կը շահի, երջանիկ կապրի, իսկ այն որ պարսպ թիւդ կը տեսնէ, իր վերջին օրը ստեսած կըլլայ, ապերջանիկ:

1870 թւին Պրոտայի մէջ ամուսնութիւն մը տեղի ունեցաւ, ամուսնացողները քաղաքին միջնակարգ հայ բնտանիքներուն կը պատկանէին: Խաչիկ ողան հազիւ երկու կամ երեք տնգամ օրիւրդ Մարբուհին տեսնելու բարեբաղդութիւնը ունեցած էր, այն ալ կամ եկեղեցին և կամ փողոցին մէջ:

Մարբուհին որքան ալ միջնակարգ բնտանիքի մը կը պատկանէր, սակայն բարբախտաններու աղջկանց

դպրոցի մը մէջ բաւական խնամօտ կրթութիւն մը ստացած էր, իսկ խաչիկ աղան, բուրձրովին հին սերունդին կը պատկանէր, Սարգսու ու Նարեկ կարգացած էր, սակայն շատ պարկեշտ մարդ մըն էր:

Ամուսնութեան բուր ձեակերպութիւնները միջնորդ կիներու ձեռքով եղած էր, Մարքուհիի ծնողները խաչիկ աղայի պարկեշտ վիճակը և բիշ շատ նիւթական լաւ գրութիւնը նկատի ունենալով հաւանած էին իրենց աղջիկը անոր կնութեան տալ, աւելորդ է ըսել թէ բնաւ Մարքուհիի կամքը չէին հարցուցած: Իսկ խաչիկ աղան Մարքուհիին արտաքին գեղեցիկ երևոյթներէն գրաւուած իր հաճութիւնը յայտնած էր Միջնորդ կնոջ, որը ճարպիկութեամբ գլուխ բերած էր այս միութիւնը, բաւական խոշոր դումար մը կարգելով իր բնական վարձը:

Ամուսնութեան առաջին մէկ քանի տարիները շատ երջանիկ ու խաղաղ անցան, փոխադարձ սիրով ու գորովով կը գգուէին զիրար: Մարքուհին կաշիատէր խաչիկ աղան Սալոնի մարդ դարձնել, ճամարխու ուսուցիչի մը նման անոր դաս կը տար արդի քաղաքավարութեան բուր կեղծ ու պատիր ձեւերը և շարժաձևները, նոյն իսկ կախատէր շուկայի մարդուն երոզական պարեր սովորեցնել...: Մարքուհի յաջողած էր ճաշակաւոր Սալոն մը ստեղծել տալ, ճոխ կահկարաս քով և Սալոնի անբաժան բխանոյով:

Խեղճ միամիտ խաչիկ աղան կը համակերպէր Մարքուհիին և սկսած էր իրեն ազնւականի մը հովեր տալ. ինքզինքը սպառաջին հողարարձութեան կամ թագականութեան ընտրելի կը նկատէր: Վերջապէս Մարքուհին յաջողած իր տիրել խաչիկ աղայի վրայ:

Չմեռան երկար գիշերները, երբսը հիւրեր չէին ունենար, Մարքուհի նստած գաշնամուրին տուլ իր կուսական նուրբ մասներով Մօծարտի Պէթօֆէի, Հայտընի, Վէրաի, Չուխաճեանի և այլոց հրաշակերտներն կ'ածէր և երբեմն կերպէր սոխականման ներգաշնակ ձայնով: Խաչիկ աղայ յախշտակաւ այդ ասուածային եղանակներու ներգաշնակութենէն, վառարանին մօտ կը նստէր գրեթէ թմրած և կամ տոկոյ իր աթուր Մարքուհիին մօտեցուցած անոր սակեթել մազերուն հետ կը խաղար, աչքերը հոգեպիշ Մարքուհիի փափուկ մասներուն վրայ յառած: Երջանիկ օրեր...:

Վայելեցէք այդ բարեբաւակ ժամերը ո՛վ սիրասուն ամուսնու, քանի որ առիթը ներկայացած է, սրովհետեւ ո՛վ գիտէ թէ սե ամպեր չը պիտի գան մի՞տոգնել ձեր պայծառ միջնուորտը...:

Խաչիկ աղա և Տիկին Մարքուհի շատ գիշերներ ալ ուրիշ ընտանիքներու այցելութիւններ կը տային և փոխադարձ անոնց այցելութիւնները կընդունէին և այսպէս մէկ քանի ընտանիքներ մէկ վայրի մը մէջ հաւաքուած հաճելի և քաղցր ժամեր կանցնէին:

Իրենց այցելութիւն տուող ընտանիքներու մէջ մտերմութեան կողմէ առաջին տեղն կը գրուէր Պերճեան ընտանիքը: Պարոն Երանդ այդ ընտանիքի անդրանիկ զաւակն էր, իր կրթութիւնը առած էր Պոլսոյ Լիսէին մէջ, հազիւ քսան և վեց մայիսներ էր տեսած. աչքերն սև ու գրաւիչ, այսերն կոյսի մը նման վարդազոյն, նուրբ պեխեր կը զարգարէին իր դէմքը, ունէր փափուկ և զիւրաթեք ձեւեր ու շարժաձևներ. իր խօսակցութեան մէջ տասնէն մէկ ֆը-

բանակերէն բառեր մուտ կը գտնէին, բառական լսու-  
 հայերէն գիտեր, սակայն անշուշտ ընդհանուր սովու-  
 բութեան հետեւելով այդպէս կը վարուէր, սովորութիւն  
 մը որ օրէնքի կարգ անցած է Պոլսոյ կըթեւած երի-  
 տասարդութեան մէջ, այդ կերպ խառն խօսակցու-  
 թեամբ իրենց կամ ֆրանսագէտ և կամ գիտուն (?)  
 մը ըլլալնին կուզէին յայտնել: Անկասկած այսպիսի  
 ցաւալի իրողութեանց միակ պատճառը սովորային լսող  
 գաստիարակութեան մը պակասութիւնն է. այս բոլոր  
 սովոր երևոյթները օտարօտի գաստիարակութեան  
 արդիւնք են:

Երևանդ լիսէի աշակերտած ժամանակ Բերայի  
 սիրատենչիկ օրիորդներու բարեկամութիւնը շահած  
 էր իր համարձակ բնակութեամբ: Օրիորդները  
 թերեւս զինքը անկեղծօրէն կը սիրէին, բայց ինքը  
 անոնց սէր կը կեղծէր, պարզամտէն ծամանցել համար:  
 Գիւրախաբ երիտասարդ մը չ'էր, գիտէր թէ ամուս-  
 նութիւնը լոկ կին մը առնել չէ, երբեք յոյս չունէր  
 թէ իր իտէալին համարաստասիւսնող կին մը պիտի  
 գտնէ... որովհետեւ իր շուրջը չէր տեսներ իր վնասը  
 ուսած իտէալը:

— Ախ, կըսէր երբեմն, ամուրիի կեանքը երջա-  
 նիկ է ...:

Եւ ինչ էր իր իտէալը:

Շատ պարզ, այլ հազարապիտ: Օրիորդ մը որ  
 ունենայ գեղեցկութիւն, հարստութիւն, կըթութիւն  
 և հաւատարմութիւն ...: Կը խորհէր և երբ իր ուշը  
 այս վերջինին վրայ կը դարձնէր, երկար շունչ մը  
 կը քաշէր և գլուխը կ'օրօրէր. այդ կը նշանակէր  
 գեղեցիկ, հարուստ, կըթեւած օրիորդ մը գտնել քիչ

մը գիւրիւն է, բայց հաւատարիմ... ախ, ոչ. կիներ,  
 սայտմայ – հրեշտակներ, որ երկրիս վրայ են կազմած  
 իրենց դժոխքներ ...:



Տիկին Մաքրուհի և խաչիկ աղայի ամուսնու-  
 թեան վրայ տասը երկար տարիներ անցած էին, 1880  
 թվականին Մաքրուհի քսանեինը գարուններ ողջու-  
 նած էր, և այդ տասը տարւան մէջ իր գեղեցկութիւնը  
 կրկնապատկեւած էր, ունենալով նաև կնոջ մը յատուկ  
 կերպարանքը: Կիներ կան, որ լուսնի նման քանի-  
 յառաջանան իրենց տարիքին մէջ՝ այնքան կը գեղեց-  
 կանան, և կան կիներ ալ, որ տարիներու հիւժիշ-  
 բեռան տակ տակաւ առ տակաւ կը սգեղնան: Մաք-  
 րուհին առաջիններուն մէջ կը դասուէր:

Գալով խաչիկ աղային, յիտուն աշուններ տեսած  
 կը թւէր, աշուններ, վասն զի աշունը ինչ համեմա-  
 տութիւն որ ունի դարնան հետ, նոյնն ունէր խաչիկ  
 աղա Տիկին Մաքրուհիի հետ:

Տիկին Մաքրուհի այդ տասը տարւան մէջ միայն  
 աղջիկ մը ունեցած էր, որ իր հինգերորդ տարին  
 կը թեակոխէր:

Պերճեանց ընտանիքը, ինչպէս նաև ուրիշ ընտա-  
 նիքներ, նոյն տարւան մէջ խաչիկ աղայի գիշերային  
 այցելութիւն կուտային. սովորական այցելութիւն մը  
 չէր այս, այլ խաչիկ աղայի անւան տարեդարձի սո-  
 նախմբութիւնն էր:

Առիթը ներկայացած ըլլալով, յայտնենք, որ  
 Պ. Երևանդ կը սիրէր Տիկին Մաքրուհին ...:

— Որչա՛վ գեղեցիկ է, կրտէր, և որչա՛ի ազնիւ, ո՛հ, երջանիկ է յօաչիկ ազան, որ յաջողած է իր կե- նաց ընկերը գտնել, թեև ոչ համապատասխան իրեն, տանը պահապան հրեշտակն է, առնը գրախօսի մը վերածած է : Բայց... այո՛, այստեղ բայց մը պէտք է... արդե՛օք հաւատարիմ է իր ամուսնուն : Տարա- կոյս չունիմ, որ Մաքրուհի հաւատարիմ կին մըն է : Սակայն ես ինչու համար անոր մասին տարօրինակ զգացում մը կը կրեմ, այն ժամերը, որ առանց զին- քը տեսնելու կանցնեմ, ա՛խ, չարչարանքի ժամեր են : Բայց ինչու այսպէս : Կզգամ թէ կը սիրեմ՝ զինքը, սակայն ցնորք մը չէ՞ այս... : Վրդովել անոնց երջանիկ կեանքը, քակակել ու քանդել անոնց սրբա- զան միութիւնը, ա՛խ, չար սիրտ, ինչ՞եր չես փախա- քիր, քու հանգիստդ ուրիշներու տառապանքին մէջ կը փնտռես. ո՛չ, ո՛չ, պէտք է մտքէս վանեմ այդ սակալի գաղափարը թէ՛ ես Մաքրուհին կը սիրեմ... :

Պ. Երւանդ չէր գառանցէր, երականութիւնն ինքն էր, որ կը խօսէր. այո՛, Երւանդ ամենաջերմ կերպով կը սիրէր Մաքրուհին, թէև շատ ջանացած էր մարել իր սրտի այդ նորաբորբոք կայծը, այլ ՚իզուր... , քանի կը ջանար մարել զայն, ընդհակա- ոակը այնքան աւելի կը բորբոքէր, ինչպէս որ յօա- չիկ աղայի տօնախմբութեան օրը մուխով խառն բո- ցեր արձակել սկսաւ... :

Այդ գիշեր, հիւրերը Սալոնին մէջ հաւաքւած ուրախ զւարթ ժամեր կանցնէին : Տիկին Մաքրուհին թէև բոլոր հիւրերը գոհացնելու ջանք մը կընէր, սակայն աւելի շատ կզբաղէր կրթւած այրերու և կիներու հետ, իսկ յօաչիկ ազան բոլորովին հակա-

պատկերն էր, աւելի կախարժէր իրեն նման տարկրոս հին գլուխներէ, երիտասարդներու խօսակցութենէ համ չէր առնէր :

Մաքրուհի բան մը բերելու համար ներքեի յարկի սենեակներէն մին գնաց. Երւանդ անոր հե- ռանալը նշմարած էր, սրովհետև միշտ գաղտնագողի անոր շարժումները կը դիտէր : Երւանդ առանց ու- ըրիչներու կասկածը հրուիրելու Մաքրուհիի քայլե- րուն հետևելով անոր մտած սենեակը յառաջացաւ և... կայծակի արագութեամբ Մաքրուհիի վիզը նետ- լեցաւ... : Երւանդի գլուխը գինիի շոգիով տաքցած էր, աչքերէն կայծեր դուրս կը ցայտէին :

Մաքրուհի ոչ թէ ընդդիմութեան, այլ բառ մը իսկ արտասանելու ժամանակ չունեցաւ, ամեն բան կառարւած լմնցած էր ակնթարթի մը մէջ, յան- կարծակիի եկած էր :

Երւանդ համբոյրը քաղելէ յետոյ սիրաբըշիւ գոչեց .

— Ո՛հ, պաշտելի՛ էակ, բոլոր հոգւովս կը սի- րեմ քեզ... :

— Խենթեցա՞ր, ինչ՞ եղար, Երւանդ, գոչեց Մաքրուհի ապուշ կրթւած և ձեռքերովը Երւանդը յետ մղելով :

— Քեզի համար ոչ թէ միայն խենթանալ, այլ նոյն իսկ պատրաստ եմ մեռնելու... :

— Նպատակդ ի՞նչ է, ի՞նչ կուզես... :

— Ո՛հ, Տիկին, սիրտս գրաւեցիր, հոգիս տիրե- ցիր, կը պաշտեմ քեզ... :

— Մի՛թէ չը դիտե՞ս որ ես ամուսին մը ունիմ :

— Դժբաղդութիւն... , երանի՛, հազար երանի

էր, որ չունենայիր և դուն իմն ըլլայիր :  
— Քանի որ ամուսին մը ունիմ, քուկդ չեմ կրնար ըլլալ, ամօթ է քու ըրածդ, յարեց Մաքրուհի այնպիսի շեշտով մը, որ սերտ հաւատարմութիւն կը շնչէր :

— Գիտեմ այդ բոլորը և այդ գիտնալով հանդերձ չեմ կարող զսպել սրախ տարօրինակ զգացումը, մէկ բառէդ կախում է իմ երջանկութիւնը կամ թշուառութիւնը ... , կեանք կամ մահ քեզմէ կապանմ :

— Նպատակդ ինչ է, կրկին գոչեց բարկութեամբ Մաքրուհի և սենեակէն դուրս գալու շարժում մը ըրաւ :

— Ո՛հ, բառ մը միայն ... : Տիկին, կը սիրե՞ս զիս թէ՛ ոչ ... :

Մաքրուհիի գէմքը գունաթափեցաւ, մարմինը ամբողջ դողալ սկսաւ. հազիւ կարողացաւ դողքով ձայնով մը պատասխանել :

— Անկարելի է. ըրածդ պարզապէս յիմարութիւն է :

— Կը պարտտի՞մ ... :

— Դուրս ել՛ , կըսեմ քեզ, ապա թէ ոչ ... :

Երւանդ յուսահատ ու սրտաբեկ սենեակէն հեռացաւ :

Մաքրուհի այն հազազիւս կիններէն մէկը կերևար, որ շատեր կը փափաքին ունենալ : Եւ միթէ իր այդ խիտ, բայց վայել վարմունքով հաւատարմութեան կենդանի տիպար մը չէ՞ր ներկայանար ... :

Այդ գէպքէն յետոյ Երւանդի սէրը փոխանակ մարելու, աւելի բորբոքած էր. օրէցօր սաստկանալով զինքը լափելու չափ ալ յառաջացած էր : Ստէպ

անճառապանութեան վրայ կը խորհէր, կտատրեալ սկիւտիկեան մըն էր դարձած, սակայն կեանքի դարձու թիւնները այնքան կը սիրէր, որ այդ սեպ մտածումները իսկոյն կ'անճեռէին :

— Հաւատարիմ՝ կին մը, կըսէր, անկարելի է. կին մը որ գեղեցիկ է, պէտք է որ այդ գեղեցկութեան հետ ունենայ նաև անհաւատարմութիւն, պարսկեան իր գեղեցկութիւնով, հրապուրէ, հրահրէ և իրեն քաշէ ուրիշները, այլապէս նա չը գնահատէր իր գեղեցկութիւնը : Վերջապէս, կին խօսք լի մը արի մէջ կը ներկայացնէ նաև անհաւատարմութեան ուրակներ, այո՛ , կին և անհաւատարմութիւն համանիշ բառեր են : Պազատանք, ագաչանք, խտտումներ, ապառնալիք անոր սիրտը չը կակղեցուցին, ո՛հ, համբերութիւն, վերջապէս, Մաքրուհի՛, գու իմն պիտի ըլլաս, այո՛ , ներքին զգացումս զիս չը պիտի խաբէ ... :

**Գ.**

Քնտ թեան ծոցին մէջ ամեն ինչ փոխուեալ, կերպարանափոխուեալ և նորոգուեալ է ենթարկուած. կին մը, որ բնութեան գեղեցիկ մէկ մասը — գարգը — կը կազմէ, ինչու համար այս օրէնքին չ'ենթարկուի, ինչու համար բացառութիւն կազմէ :

Կարծես բնութեան այս օրէնքը ապացուցանելու համար Մաքրուհի 1882 թեականին տարբեր գէմքով կը ներկայանայ մեզ, բոլորովին հակապատկերը 1880 թեականին. այն ժամանակ տիպար մըն էր հաւատարմութեան, այժմ՝ ճիւղաղ մըն է դարձած : Այդ

Հաւատարիմ և հաստատաժող երևցող կնոջ վրայ վերջապէս երբանդը յաջողած էր իջխել. ամեն կին տրեւար կողմ մը ունի, ո՞վ գիտէ. Երբանդ ինչպէս յաջողած էր գտնել անոր տկար կողմը: Բնաւորութիւններու փոփոխութեանց զայդոնկըքը լուծել, կը նշանակէ վերլուծել միջավայրին, խառնածքին, ցեղային սովորութիւններու և ժողովրդականութեան, վերջապէս ամբոխային հոգեբանութիւնը: Այդ մեղի շատ հեռուները կը տանէր:

Մաքրուհի աշխարհն զիմադրելէ վերջը նետուած էր երբանդի գիրկը, փոխադարձ սէր ցոյց կը տար և այդ սէրը . . . մոլեգին ու վայրագ սէր մըն էր:

Գարնան գեղածիծաղ օրերուն մէջ առաւօտ մըն էր . . . : Ո՛հ, ո՛րքան զգլխիչ ու հրապուրիչ է տեսնել բնութեան այդ զարթնումը, ուր ամեն բան կը շարժի, կը փայլի, կ'ողևորի ու կը թարմանայ. . . . կարծես նոր կեանք, նոր սէր կուգայ աշխարհ:

Եւ ինչու համար մարդկային սեռը անբաժին մնայ այս տիեզերական ընդհանուր շարժումէն: Միթէ բնական չէ, որ մարդու արեւն երակներու մէջ աւելի արագ շրջան ընէ, քան տարւայ միւս եղանակներուն մէջ, ինչպէս այդ բանը տեղի կունենայ բուսական աշխարհին մէջ. ինչ են ծառերը զարդարող տերեւները, ծաղիկները ու պտուղները, եթէ ոչ այդ ընդհանուր շարժման արդասիքը: Բնաբանութիւնը ուսումնասիրելէ յետոյ ո՞վ կրնայ ուրանալ այս ճշմարտութիւնը, և բնախօսութիւնը ու մարդկային հոգեբանութիւնը սերտելէ վերջը ո՞վ կրնայ ժխտել արեան արագ շարժումը, որ տեղի կունենայ սրտի միջոցով և սրուն պտուղն է սէր:

1882 զարնան կիրակի առաւօտ մըն էր ըսի՛ր: Մ'օտակայ պորտեգներէն մէկուն մէջ, հինաւոր ցազանակենիի մը բունին տակ երկու մարդկային էակներ նստած էին, ճիւղերու և խիտ տերեւներու հովանիին ներքե ինքզինքնին արեւ կիզիչ Հաւատարիմնէրէն պաշտպանելով:

Կին մը ու երիտասարդ մը: Անտառի խորերէն երբեմն սուլող քամին կողքար շոյել այդ երկու սիրարբշիւ էակներու ճակատները և հանգիստ կառնէր տերեւներու և կնոջ վարսերուն մէջ, որովք ցիրուցան սիւսած էին սիրաբոբբը երիտասարդին մասներուն հպումովը: Մեղմաստէ քամին տերեւները թեթևապէս այս ու այն կողմ տեղափոխելով գիտող աչքերու համար անցքեր կը բանար. . . . ուրկէ արեգական ճառագայթները ներս թափանցելով կուգային լուսաւորել այդ սիրատուր զէմբերը: Երկտասարդը իր ձախ ձեռքը կնոջ մէջը նետած, միւս չալ կնոջ ձեռքն էր բռնած, իսկ կինը իր գլուխը երիտասարդին ուսին վրայ էր յենած, իր ձախ ձեռքը իրեն բարձ ընելով, այնպիսի գիւրք մը ստացած էին, որ մէկ ճիւղի վրայ թառած զոյգ մը տասրակներու կը նմանէին. . . : Աչքեր հոգեպէշ իրար կը դիտէին և շրթներ անձայն կը բարբառէին, հոգիք արգէն վաղուց միացած էին. . . և գիտող աչքեր պիտի կարծէին թէ կը քնանային. . . որովհետեւ անշարժ ու լռիկ նստած էին:

Եթէ պատահմամբ ճամբորդ մը այդ կողմէն անցնելու ըլլար, բնազդաբար իր քայլերը այդ վայրէն պիտի հեռացներ, չը խանգարելու համար անոնց երանաւէտ յափտակութիւնը. . . :



Հեռուն, անտառի խորերէն, իգական սեռի յատուկ ձայնով անգլխական երգի մը արձագանքն կուգար, թռչուններու գեղգեղներուն խառնած :

Այդ հոգեգրաւ և սրտայրյղ երգի ազգեցութենէն երկտատարը գլուխը վեր առաւ և ձայնին եկած կողմը դիտեց և պահիկ մը ունկն դնելէ յետոյ, իր ընկերուհիին գառնալով, ա՛ որ շրթուքներուն վրայ տաք համրոյր մը դրոշմեց, ըսելով :

— Ա՛հ, երանի, հազար երանի կուտայի եթէ մեր կեանքի տեւորութեան մէկ սասնեցողն այսպէս ուրախ անցնէր, ինչպէս կ'անցնի այսօր . . . :

— Երանի տուր միթէ՛ ես քուկդ չեմ, միշտ քուդ չը պիտի ըլլամ, յարեց կինը, առանց գլուխը երկտատարի ուսէն դատելու :

— Այո՛, դուն իմն ես և ես քուկդ, սակայն պիտի ունենանք ապագային այս օրինակ օրեր, օրեր, որոնք ինձ համար տարիներու արժէք ունին, կեանքի հաճոյքը վայելել կուտան և հոգիք երջանկութեամբ կը լեցնեն . . . : Տե՛ս, մեր չորս կողմը ամեն ինչ սէր կը բուրէ, ամեն ինչ բանաստեղծական է, ո՛րչափ ա՛նուշ . . . :

— Ինձ համար քու ձայնէդ ավելի ի՛նչ կայ սիրուն և քաղցրիկ, երգն անուշ . . . դու անկէ ալ ավելի անուշ . . . : Ո՛հ, չէի կրնար երևակայել թէ պիտի գտնուէր աշխարհիս վրայ մէկը, որ այչափ սիրէի . . . : Դուն ինձի համար սիրոյ աղբիւր մը եղար և որը միայն քեզմով կը վայելեմ. կը կարծէի թէ ինձ համար արեգակը իր մարը մտած է և վերջալոյսը սկսած . . . բայց ո՛չ, սխալեր եմ, դուն երևանք, դուն նորոգեցիր իմ սրտի մէջ սիրոյ կայծը և

վերջալոյսին յաշորգեց զբարգազին արշալոյսը . . . : Չե՛ս գիտեր ո՛րչափ տառապանքներ կը լի համակերպութեամբ տանելով ինձի անհամապատասխան ամուսինի մը բեռը, այո՛, պարզապէս բեռ մըն է ինձ համար այն, մեր զգացումները, մեր մտածումները, մեր հոգեկան պահանջները, մեր մտաւորական զարգացումը և նոյն իսկ մեր տարիքը իրարմէ բոլորովին տարբեր և հակառակ են : Պատիւս ու ազնիւս մտածելով լուսութեամբ կը տանէի այլ տառապանքի կեանքը, ներքնապէս տխուր, բայց արտաքին կերպով ուրախ և գոհ կ'երեայի : Սակայն, հիմայ, . . . ա՛խ, չարածճի՛ ամեն բան մտցնել տիր :

— Ուրախութեանս չափ ու սահման չեմ կրնար դնել, երբ քեզ իմ թեւերուս մէջ կը գտնեմ. քեզի տիրել, սրտիդ իշխել, ինձ համար բոլոր աշխարհի հրամայելէ ավելի է, սակայն . . . կը տիրիմ ու կը յուսահատիմ, երբ կը մտածեմ թէ մարդկային և հասարակական օրէնքը մեզ կը դատապարտէ, մարդիկ արգօտեան աչքերով կը դիտեն մեր շարժումները և արգելք կը հանգիստնան մեր սիրոյն, մեր գգանքին . . . ա՛խ, մեր սէրը հասարակական կարք ու սովորութեան հանդէպ ոճիր մըն է և մե՛ք ոճրագործներ . . . : մեր սէրը միայն բնութիւնը կը նւիրապօրծէ ու կ'արդարացնէ . . . :

Երկտատարը ախուր հտառչով մը ձեռքը ձակտին տարու և վայրկեան մը մտախոհ մտալէ յետոյ շարունակեց :

— Մեր հանգիստը, մեր յախտեանական միութիւնը մէկ բանի մէջ կը տեսնեմ :

— Ա՛նչուչա՛ ամուսնութեան մէջ, ըսաւ Մարրուհի

երխտասարդին խօսքը ընդմիջելով և զլուխը անոր ուսէն զատելով :

— Ո՛հ, ո՛չ. այդ երկրորդական է, Մաքրուհի, նախապէս մեզ պէտք է խոյս տալ այս երկրէն, օտար աշխարհ, օտար երկիր կարող ե՛ք ծածկել մեր այս ոճի՛րը :

— Հարկ չկայ այդ միջոցին գիմելու, ևս մեր յաւիտենական հանգստութեան համար միջոց մը խորհած եմ, որ քիչ օրէն գործադրել պիտի սկսիմ . . . :

— Եւ ի՞նչ միջոց է այդ. արդեօք զերծ պիտի ըլլանք ամեն օտար միջամտութենէ :

— Անշուշտ, և յուսամ թէ պիտի յաջողիմ, եթէ ոչ հակառակ պարագային կը հեռանա՛ք այս վայրերէն . . . :

— Ի՞նչ, արդեօք զայն պիտի թունաւորե՞ս . . . :

— Երբեք, երբեք. նախ, որ այդ միջոցը շատ բարբարոս է, երկրորդ վտանգաւոր. ընդհակառակը իմ ընտրած միջոցով ոչ ոք պիտի կասկածի մեր վրայ :

— Ո՛հ, կիներէն ամեն բան կը յուսամ . . . :

— Կը ծաղրես զի՞ս :

— Քաւ լիցի, բայց չե՛մ կրնար իմանալ ընտրած միջոցդ, գուցէ իմ խորհուրդով քեզի օգնեմ :

— Մի ստիպեր ինձ յայտնելու, շուտով պիտի իմանաս արդէն, եթէ յաջողիմ, կուզեմ քեզի հաճելի անակնկալ մը պատճառել :

Արեգակը իր վերջին մնաս բարեն կ'ըսէր. մեր սիրահարները ոտքի ելան և հանրոյրներ փոխանակեցին. երկար ժամեր այդ սիրավայրին մէջ անցունելէ յետոյ, տակաւին մեկնիլ չէին ուզեր . . . Եթէ կարելի ըլլար, գիշերն ալ հոն պիտի անցունէին . . . :

Մրկմտեան կողմը պայծառ երկնքի վրայ գիղուղ զուգահեռական կարմրերփեան թեթև ամպերը այդ երկու սիրարբշխ գլուխները գէպի տուն առաջնորդեցին . . . :



Մաքրուհի և Երանդի սիրային յարաբերութիւնը բնական ժամանակ թէև դադարի մնացած էր, սակայն շատերու կասկածն ալ իրենց վրայ հրաւիրած էին : Իբրև սիրոյ ընական հետեանք, Մաքրուհի օրքան ալ կը ջանար իր ամուսնուն կեղծ գգուանք մը ցոյց տալ, սակայն յաջիկ աղայ իր կնոջը վարմունքին մէջ տառնութիւն մը կը տեսնէր :

Երանդի աղայ այդ տուն վարմունքին պատճառը փնտռելու մէջ երկար ժամանակ իր ուղեղը չը յողնեցուց, որովհետև երկու սիրահարները վերջապէս մտոնեցան և յաջիկ աղայի համար ամեն բան պարզեցաւ :

Մի օր պատահաբար յաջիկ աղայ իր կնոջ սենեակին մէջ տեսաւ Երանդը իր կնոջ հետ միասին, գրեթէ իրարու գիրկ նստած . . . : Այդ օր, գաղտնիքը ծածկող վարագոյրը պատուեցաւ և ամեն ինչ պարզ տեսնուիլ սկսաւ :

Երանդի աղայ իր կասկածներն իրականացած տեսնելով խորին յուսահատութեան մասնեցաւ. ինքը բնաւ տրտմամբ շատ թոյլ և անվճռողական մարդ էր : Այդ շարագուշակ օրէն սկսաւ խանդալուիլ իր խաղաղ կեանքը և ընտանեկան երջանիկ բոյնը դժուար գարծաւ :

1001  
6967

Խաչիկ աղայ լիչելով իր ամուսնութեան առաջին օրը, անիծեց իր ճակատագիրը :

— Աւելի լաւ չէ՞ր բլլար, որ ազբառ ու չք կրթւած աղջիկ մը առնէի և աւելի հանդիստ խզճախ ապրէի . . . , ասոնք չե՞ն մեր կրթւածները, Լիլըր-տածներ :

Մաքրուհի ինքզինքը արդարացնող և անմեղութիւնը հաստատող հազար և մէկ կնոջ յատուկ վիստաբանութիւններ մէջ բերաւ, քակայն ասոնք խաչիկ աղայի համոզումները չը վախեցին . . .

Մաքրուհիի թափած արցունքները խաչիկ աղայի համար թունաւոր օձի մը լորցունքներն էին :

Խաչիկ աղայ իր այնքան վաղուց և երջանիկ անցուկաւէն միայն մէկ բան մը ունէր մխիթարական— իր փոքրիկ աղջիկը : Տան մէջ միայն այն ունէր բարեկամ, զաւակ և ամեն ինչ, անոր հետ միայն կը խօսէր, և երբեմն ալ արատաւալից աչքերով զայն կը հանրութեւր, և այդ արտասուքները փոքրիկ աղջկան ուշադրութենէն չէին վրիպէր :

— Ի՞նչու կուտաս, անուշ հայրիկ, կըսէր փոքրիկըն Չոհարիկ :

1882-ին խաչիկ աղայի մտղերը ամբողջովին սպիտակցած էին, գէժքը նիհար ու գունատ էր, այնչ պէս կերպարանափոխւած էր, որ երկու տարի առաջ զինքը տեսնողը, այսօր չը պիտի կրնար ճանչնալ. թէ 52 տարեկան էր, սակայն ութսուն տարեկան ծերուկի մը ընկճւած երեսիթը ունէր : Գիշերաւն հանգըտի ժամերը անքուն ծխելով կ'անցունէր : Այլևս իր գօրծին ալ չէր հետևէր, տխուր ու մտախոհ օրը ճարաններու անկիւնները ժամանակ կ'անցունէր : Իրեն

համար Պրուստն դժոխային վայր մըն էր դարձած, իսկ Մաքրուհին հրէշ մը . . . :

— Ո՛հ, կըսէր դոտանցողին, այն օրը երբ իմ ճակատագիրը որոշեցաւ, չ'զոյոյի թէ քահանայի օրհնութիւնը զատուցարանութեանս վճիռն է եղեր, և այդ օր, չէ թէ ամուսնութեանս այլ փոքրագու-թեանս ու թշտոտութեանս դաշինքը կնքած եմ . . . :

Խաչիկ աղայ երկար չը կրցաւ ասնիլ Մաքրուհիի ներկայութիւնը, անոր ուրականը միշտ աչքին գէճն էր, հետեւաբար սրտեց տմեն բուն, մինչև անգամ իր պաշտելի դուստրը թողած հեռանալ այդ անիծեալ վայրէն և շունչը Պսլիս արտաւ . . .

Պսլայ մէջ բարձրովին անմխիթար մտցուեցրէր աչքին առջևէն չէր հեռանար Մաքրուհիի ուրականը, գէթ Պրուսայի տանը մէջ փոքրիկ Գոհարիկովը կը մխիթարէր, բայց Պսլայ մէջ այդ մխիթարութենէն ալ զրկւած էր : Երբեմն գիշերաւ կրողներուն մէջ սիրունիկ Գոհարիկը ատենելով կը մխիթարէր, բայց երբ արթննար, խորին թախիծ մը կը պատէր զինքը և տխուր հառաչով մը կըսէր . . .

— Իմ Գոհարիկես ապագան բնչ պիտի բլլայ հրէշին ձեռքը, ինչու համար հետո շտախ սի Ստուած իմ, գոնէ անոր անմեղ և անբիծ հոգին սորովէ . . . :

Մաքրուհին հետևեալ օրն իսկ իմանալով աստուհին Պսլիս փախչելը, ներքին գոհունակութիւն մը զգաց և ազատ ասպարէզ գտաւ իր մտածած ծրարի-րը գործադրելու :

Մաքրուհիի տանը կից բոլորական ընտանիք մը կապրէր, օրը կը բաղկանար յետան տարեկան այրի կնոջմէ մը և տաս տարեկան աղայէ մը, այդ աչքին

բանն եթէր տարեկան զաւակ մըն ալ ունէր, որ Պոլիս Ղալաթիա թաղը շապիկագործ էր: Այրի էնո՞ անունը Զապէլ էր, իսկ մեծ աշունք Բարունակ:

Այս կիներ իր զաւակին հետ խորհրդաւոր կեանք մը կը վարէր, ոչ ոք չէր գիտէր թէ ինչպէս կ'ապրէր...: Մաքրուհի այդ կիսը այցելու թիւն մը տես, տար խօսակցութեան մը սկսան, որ վերջը սակարկութեան յանգեցաւ, քանակին վրայ կը պնդէին, մէկը հարիւր կըսէր, իսկ միւսը յիսուն:

Մաքրուհին մեկնելու շարժում մը ընելով ոտքի ելաւ և վճական ձայնով մը ըսաւ:

— Տիկին, վերջնականապէս կ'ըսեմ, երեսուն սակի քեզի և երեսուն սակի ալ տուրք կը տամ, որով եթէ գործը զլուխ հանես, վաթսուն սակի ստացած պիտի ըլլաւ:

— Գոնէ ութսունի բարձրացուր, ըսաւ Տիկին Զապէլ:

— Ստակ մը աւելի չեմ տար, վերջին խօսքս ինչպէս, կը հաւանիս:

— Շատ լաւ, թո՛ղ այդպէս ըլլայ:

— Բայց կազաչեմ, աշխատէ շուտ վերջացնել:

— Կ'աշխատիմ:

Այս տեսակցութեան յաջորդ օրն իսկ Տիկին Զապէլ իր փոքր տղան նամակ մը գրել տաւ ուղղեալ իր մեծ որդիին՝ Բարունակին: Թէև ջանացիներ այդ նամակը ձեռք ձգել, սակայն չը յաջողեցանք, միայն կրցանք նամակին բովանդակութեան վրայ գաղտնար մը կազմել:

Նամակը այս մտքով գրած էր:

«Մեր գրացին խաչիկ ապա Պոլիս է, գտիր

«չինքը և համոզէ որ ամուսնանայ, աղջիկ մը կամ «կին մը գտիր և անոր հետ ամուսնացուր: Պատճառը «բացատրել աւելորդ է, Տիկին Մաքրուհիի փոփոքրն «է այս և մեզի ալ վաթսուն սակի խօստացած է, «քեզ նայիմ, սա գործը շուտ լնացուր, բայէն զի «վաթսուն սակիին վրայ նստինք»:

Բարունակ այս նամակը ստանալով խաչիկ աղան գտաւ, որուն հետ մէկ քանի անգամներ արդէն տեսնուած էր: Սկսաւ իր բոլոր ճարտիկութիւնը դարձ դնել խաչիկ աղան համոզելու համար:

— Գրեթէ ծերացեր ես, խաչիկ աղա, ծերութեանդ վերջին օրերը ախար մի անցունէր. Պոլիսը մէջ քեզի մտրդ չը հանջուր, ազդական մը, բարեկամ մը չունիս, վերջդ ինչ պիտի ըլլայ...: Մաքրուհիէն ալ յոյսդ կարած ես...:

— Ինչ ըսել կազեա:

— Բսել կուզեմ, որ ծերութեանդ վերջին օրերը հանգիստ կրնաս անցունել նոր ամուսնութեամբ մը...:

— Ինչ... ամուսնութիւն...: Մտած մի արտացէ, մտած մտրդ մը կրկին մեռցնել կուզեմ...:

— Քաւ լիցի, ախար կացութեանդ գիտնալով քեզի բարկք մը ընել կը փախարիմ: Սմեռ կին Մաքրուհի չէ...:

— Ախ, ամեն կին ինձ համար ստատանայ մը, ճիւղ մըն է, ախ, եթէ միայն լսած լինէի, լսած լինէի կ'ըսեմ, ինձ պատահած այս աներկակայելի դժբաղդութիւնը, Գոհարիկի վրայ կերպուած, որ երբեք չէի ամուսնանար, և հիմայ դուն ինձի երկրորդ դժբաղդութիւն մը կ'առաջարկես...: այդ անկարելի է:



խաչիկ ազար, չը կըցաւ շարունակել իր խօսքը, արատասերի հեղհեղներ տեղան ծամ կեցին իր մեղա-

մաղձատ գեղը և հեծկըսանքի մէջ հեկհեկեց. «արա՛յ»

— Ախ, գերեզմանիդ մէջ իսկ հանդիսաւ չը գանձես, չար հոգի հընչ...: Գեղոր աւ շնչում բժգ. Բարունակ տեսնելով խաչիկ արայի զգացած վիշ-

աքը, սը անցեալի տխուր հեռքերը խորաբանգակ թու- ղած էին անոր սրտին մէջ, պահ մը յուսահատեցաւ.

սակայն նարէն իր պալարիւնութիւնը գանձելով իր չար գիտաւորութիւնը ազաջ տարաւ. «սիցում յմոք խաչիկ ազար, անցեալը ապագային հետ ինչ կապ ունի, քանի սը յապագայ մը կընայ լաւ ըլլալ, անանց անցեալը լաւ ըլլալու...: Դ՛ր քոյտն զիմք ին

— Շաա լաւ, սեպենք թէ զիս ամուսնացնելով բարիք մը ընել կուզես, սակայն քսէ տեսնեմ, սը կին զիս ա՛յնքան պիտի կընայ սիրել, որքան Մարբուհին կը սիրէր զիս, և վերջը ինչ եղաւ...: Ո՛հ, այլեւս այդ անիծեալ անցեալիս վրայ խօսք մի՛ բանար, կողաչեմ:

— Բայց ներէ, որ միտքս պարզեմ: Գուն շատ մեծ սխալ մը գործեցիր քեզմէ երեք անգամ փոքր և քեզմէ հազարապատիկ աւելի կըթւած աղջիկ մը տանելով, գուն քու տարիքովդ, քու մտաւոր սահմա- նափակ վիճակովդ բնականաբար անոր բուականու- թիւն չը պիտի պատճառէիր, ան տարբեր ճաշակներ, տարբեր ցանկութիւններ ունէր, գուն տարբեր, վեր- ջապէս ան ալ կին մըն էր, բուսական տարիներ հա- մակերպելէ վերջը, որ մըն ալ ապստամբեցաւ...:

— Ինչ կը կարծես, որ ասկէ վերջը ամուսնա- կան կեանքին մէջ հանդիսա գտնեմ:

— Սյո՛: Օրիորդ մը կայ, սը քառասունը ան-



յո՞ժ է, աղնիւ, բարի, համեստ և անտեսագէտ աղջիկ մըն է, զիչեր-ցերեկ կաշխատի և իմ շապիկինն զս ար- դուկելով օրտկան քառասունը գրաչի մօտ դրամ կը շահի և պատրաստ երկու հարիւր սակի ունի: Ա՛րդ,

կ'ազաչեմ, ուշագրութիւն ըրէ, այս աղջիկը քեզի ինչ կընայ ընել իր այդ յառաջացեալ տարիքին մէջ, դուն ալ ունեցած կարողութիւնդ արդէն վատնած ես, դրամ չ'ունիս, աշխատելու կամք և ոյթ չունիս, վերջը ինչ պիտի ըլլայ...:

Եւ իրօք ալ խաչիկ ազարի նիւթական և հոգե- կոն վիճակը շատ վատ էր, սակայն այսուհանդերձ երկոր ծամանակ ընդդիմացաւ Բարունակի յայտնած պարտիարին:

Կարիքը և թշտութիւնը մէկ կողմէն, Բարու- նակի ճարպիկութիւնը միւս կողմէն խաչիկ ազան ստիպեցին վերջապէս ամուսնանալ այդ աղջկան հետ:

Բարունակ Օրիորդն ալ համոզեց:

— Գուն մինչև ե՛րբ պիտի աշխատիս, տարիքդ քառասունը անցած է, ամուսնանալու յոյսդ ալ շատ քիչ է, պատրաստ դրամ չունիս, որ ծերութեանդ մէջ հանդիսա ընես: Հարուստ վաճառական մը կը ճանչ- նամ, թէև տարիքն սուսած մարդ մըն է, սակայն իր ծերութեան վերջին օրերը զինքը հոգացող մը ունե- նալու համար ամուսնանալ կուզէ. բարի ծերուկ մըն է, եկուր ամուսնացիր այդ մարդուն հետ և քու օրերդ հանդիսա անցուր:

Օրիորդ Լիմօնեայ, խեղճ պառս աղջիկը, Բա- րունակի այս խօսքերէն համոզելով կը խօստանայ խաչիկ ազարի հետ ամուսնանալ:

Խաչիկ ազարի մօտ հաղիւ քսան սակի մնացած

էր, այդ գրամը ծախսեց հարստնեկան մանր մանր ծախքերը հողալու և բերա թաքսիմի մօտ փոքր երկու սենեակներ վարձելու համար: Պասկաղբու թիւնը 1882 Սեպտեմբերի մէջ գաղտագողի անդի ունեցաւ բողբջական պատուելի մը ձեռքով:

Պասկաղբու թեան հետեւալ օրը խաչիկ աղայի գրպանը հազիւ քսան երեսուն զրուշ մնացած էր:

Պասկի վրայէն երկու օր անցած էր, այդ երկու օրան մէջ, հարստնեկան պատրաստութիւններէն մնացած ուտելիքները լաւ ծառայութիւն մատուցին. բայց յետոյ...: Զարմանք, այո՛, զարմանք երկու կողմէ ալ. խաչիկ աղա կ'սպասէ, որ Լիմօնեայն իր քսակին բերանը բանայ... իսկ Լիմօնեայն խաչիկ աղայէն կ'սպասէ, որ տան համար ծախսէ...: Համբերութիւն... ս'չ որ կը շարժի սակայն:

— Երկու հարիւր ոսկի ունի, ի՛նչու համար չը ծախսէր, կերակուր չը պատրաստէր... կըսէր խաչիկ աղա իւրովի:

— Զարմանք, ս'ըչափ կծծի մարդ է եղեր, հարուստ վաճառական մը ըլլալ և իր կիներ անօթի ձգէ, կըսէր Լիմօնեայ ինքնիրեն:

Բայց այս զարմանք և համբերութիւն երկար չը տևեցին: Շուտով վարագոյրը պատուեցաւ և տխուր իրականութիւնը պարզուեցաւ:

— Ո՛հ, անտանելի գժբաղբութիւն է այս, սըբատիս մէկ վերջը չը բուժւած, աւելի խոր և մեծ վէրք մը բացուեցաւ. այս գիլուած գժբաղբութիւններու ծանր հարւածներուն ու բեռին տակ ս'ը մարդկային կամք կրնայ տոկալ... ս' Աստուած իմ, զիս վիշտ կրելու համար միայն ստեղծեցի՞ր... անիծեալ

ըլլալ այն օրը, որ զիս աշխարհ բերաւ, կը դառանցէր խաչիկ աղա ազու մը պէս արտասուելով:

Լիմօնեայ, բարի, համակերպող և աշխատասէր աղջիկը, իր աշխատութիւնը կրկնապատկելով և գիշերներն ալ ուշառեւելով կը ջանար ծածկել ու ամուրբել այս գժբաղբութիւնը և մխիթարելով խաչիկ աղան, կըսէր.

— Իմ սե բողբջա եկաւ միացաւ քու սե ճակատազրիշ, սրպէտղի թշուառութեան բաժակին մինչև վերջին մրուրն ըմպեմ... բայց ի՛նչ կուզայ ձեռքէս, եղածը եղած է, ճակատագիրս է պիտի քաշեմ, հող մի ընէր, տատելով ու քրտինք թափելով քեզ ալ կը հողամի դուն ալ զործ մը գտնելով մի քանի զրուշ կը շահիս և վերջապէս գէշ աղէկ կապրինք:

խաչիկ աղայի մտաւորական կարողութիւնը ստուկաւ առ տակաւ խանդարուելու վրայ էր, փողոցէն անցած պահուն, եթէ մէկը ուշադրութիւն ընէր, պիտի տեսնէր, որ շրթունքները կը շարժէին և խենթի նման ինքնիրեն կը խօսէր.

— Մարդիկ... վայրենի գազաններ, Բարունակ... աւազակ-ոճրագործ մը, Մաքրուհի... ախ, գժու խային չար սղի մը, իսկ ե՛ս, ե՛ս, ե՛ս, ե՛ս...:



Մաքրուհին՝ իր ամուսին խաչիկ աղայի կրկնամուսնութեան դէպքը ազգային առաջնորդարանի մէջ հաստատել տալով, իր կրկին ամուսնանալուն հրամանը ստացաւ, առանց կանխաւ բան մը յայտնելու Երևանդին:

Կատարելապէս ապահովելէ և ամուսնույն  
համար ամեն բան պատրաստելէ յետոյ մի օր Եր-  
ւանդի վիզը նետուելով ըսաւ:

— Վերջապէս ազատեցանք այդ տխմարէն: Ճրա-  
դիրս յաջողութեամբ գլուխ հանեցի, այլևս օրինա-  
ւորապէս դու իմն պիտի ըլլաս և ես քուկդ...:

— Ի՞նչ մեռաւ, գոչեց Երւանդ, ապուշ էլք-  
թեւած:

— Այո, միայն մեզ համար մեռած է:

— Միտքդ չեմ հասկնար, չարածճի, շուտ պատ-  
մէ, որ սիրտս հանգստանայ:

Մաքրուհի մանրամասնօրէն պատմեց ամէն բան:

— Կը հիանամ ու կապչիմ հանճարիդ ու ճար-  
պիկութեանդ վրայ, Մաքրուհի, ա՛խ, ամեն բան  
կինքերէն յուսալի է...:

— Փիլիսոփայութիւն չուզեր, ամեն բան պտու-  
րաստ է, ձեռքդ սուր ինձ:

— Օ՛ն, սիրտս տամ քեզ Մաքրուհի:

— Ան արդէն վազուց ինձ էր:

Ջերմաջերմ համբոյներ փոխանակեցան:

Խաչիկ ազայի կրկին ամուսնութենէն ճիշդ ամիս  
մը վերջը Մաքրուհի և Երւանդի ամուսնութիւնը  
տեղի ունեցաւ:

Հասարակութիւնը այդ գէպըը քանի մը օր իր  
խօսակցութեան նիւթ ընելէ յետոյ, ալ բոլորովին  
մոռցաւ և ամեն ի՞նչ կարծես շուտով բնական վի-  
ճակ մը ստացաւ. խօսող բերաններն անգամ սկսան  
այցելութիւններ տալ:

Վեց ամիս էր անցած այդ ամուսնութեան վրայ,  
կիրակի առաւօտ մը, արեւածագին Մաքրուհի և Եր-

ւանդ թե թեի մտած այն պարտէզի ճամբան բռնե-  
ցին, ս'եր անգամ մը անոնց պատահելու բաղդն ու-  
նեցանք: Դարձեալ նոյն չադանակներն իր ճիւղն ընտրե-  
ցին իբրև իրենց նստարան:

Գեղեցիկ վաճը, հիանալի տեսարան: Երւանդ  
Մաքրուհիի մազերուն հետ կը խաղար: Անտառին  
մէջէն փչող անոշ քամին այդ երկու սիրտփառ սրբ-  
տերը կը զովահարէր, արեգակն իր չղջողուն ցոլա-  
ցումներով կարծես կը ժպտէր անոնց երանութեան...:  
Կարկաջահո ջուրը, որ իրենց առջևէն անցնելով  
փոքրիկ առևակ մը կը ձևացնէր, հայելիի նման կը  
փայլէր...: միջոց մը երբ նայեցան այդ հայելիին  
մէջ, երկու բան միայն տեսան, որ զոյգ էին, զոյգ  
մը տատրակներ որ եկած թառած էին ճիւղին վրայ  
և միւս զոյգն ալ իրենք էին...:

Անտառի խորերէն դարձեալ երգի մը ձայն կը  
լսէր:

Տարօրինակ զուգսդիպութիւն:

Երւանդ, երբ լսեց իրեն քաջ ժանօթ այդ եր-  
գը, խորին մտածմանց մէջ սկսաւ սուգիւլս զունա-  
թափւեցաւ և գլուխը երկու ձեռքերուն մէջ առաւ:  
Բանի մը վայրկեան այս վիճակին մէջ մնալով, իս-  
կոյն սթափւեցաւ և Մաքրուհին գիտեց:

Մաքրուհին նկատեց Երւանդի այս յանկարծա-  
կան փոփոխութիւնը:

— Ի՞նչ եղաւ քեզ սիրունիկս, ըսաւ մտաւտան-  
ջօրէն:

— Ոչինչ, պատասխանեց Երւանդ:

— Արդեօք փչող քամին դպաւ քեզի, երթանայ:

— Ո՛չ, Մաքրուհի, երիտասարդութեանս ժա-

մանակ յաճախ երգած ու սիրած մէկ երգս լսելով  
 հին հին յիշատակներ արթնցան մտքիս մէջ... և ես  
 իմ վրայ կը զարմանամ թէ՛ ո՞րչափ փոխուեր եմ...:

— Հասկցայ չարածձի, հին յիշատակներ բսելով  
 անշուշտ սիրուհիներդ յիշել կուզես...:

— Երբեք:

— Ի՞նչ է ուրեմն:

— Քեզի վիշտ չը պատճառեմ...:

— Բնակ, անցեալէդ կասկածելու իրաւունք  
 չունիմ:

— Այո՛, սրտիս հասարը, այն ժամանակ գրեթէ  
 ուխտած էի ամուրի մնալ...:

— Հա՛յ, հա՛յ, հա՛յ, ա՛յդ է եղեր քու յայտնու-  
 թիւնդ:

— Այո՛, և այժմ...:

— Ուրեմն, կը յիշես այն օրը, որ զիս գրկելով  
 սէրդ յայտնեցիր...:


— Այո՛, կը յիշեմ այդ երանեալ օրը, որ մեր-  
 ժեցիր սէրս... և այսօր կը պաշտես զիս, դուն ալ  
 ինձ նման ո՞րչափ փոխուցար:

— Մեր ճակատագիրը այդպէս սահմանւած է  
 եզեր, ինչ որ գրուած է այն պիտի ըլլայ կըսեն:

— Ճակատագիրը այստեղ գործ չունի, մենք  
 դեռ ապագայ մը ունինք առջնիս, այդ ապագայէն  
 վերջը կրնանք որոշել մեր ճակատագիրը, այո՛, անց-  
 եալը չէ ճակատագիրը կողմողը, այլ անոր հետ ներ-  
 կան և ապագան...:

— Ի՞նչ անուն կուզես տալ մեր այս փոփոխու-  
 թեան:

— Սեւի, հաս տեղն է երգելու այն երգը, որ  
 մեր խօսակցութեան տուն տուա՝  
 կին փոփոխածիս է,  
 խենթ է անոր վստահողը,  
 Շատ անգամ կին մը,  
 Հովին դէմ փետուր մ'իէ:



Վ. Ե. Բ. Զ.

«Հայրենիք»

1887





## ՀԵՂԻՆԱԿԻՆ ՈՒՐԻՇ ԵՐԿԵՐԸ

- 1.— ՄԱՐԻԵՄ ԹԵ ՀԱՅԿԱՆՈՒՇ (վէպ, սպառած), Կ. Պոլիս, 1889:
- 2.— ՓՈՒՆՋ ԳԻՏԱԿԱՆ (քառև, երազ, կայլմ) Կ. Պոլիս, 1891, Գի՞ն 1 Ֆրանկ:
- 3.— ԱՂՋԿԱՆ ՄԸ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ (վէպ) Կ. Պոլիս, 1895, Գի՞ն 1 Ֆրանկ:
- 4.— ՄԱՐԿԿՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՄԵԾ ԹՇՆԱՄԻՆ (հակալիդլական, սպառած), Զմիւռնիա, 1901:
- 5.— ԵՐԵՒԱՆԵՐԻ ՄՆՈՒՆԿԸ (ծննդից մինչև 15 տարեկան հասակը, սպառած), Ալէքսանդրապօլ, 1903:
- 6.— ՈՒՐԻՏԵՂ Է ԱԶՆՈՒԹԻՒՆԸ (Ալէքսանդրիոյ Սահմանադրական Պայքարը և Վերակազմեալները), Ալէքսանդրիա, 1905, Գի՞ն 50 Սանթիմ:
- 7.— ԸՆԴԱՐՁՁԿ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՏՈՒԹԻՒՆ (120 պատկերով. էջ 679), Ալէքսանդրիա, 1906, Գի՞ն 15 Ֆրանկ:

### ՎԻՊԱԿԱՆ ՀԱՒԱՔԱՇՈՅ

- 8.— I. ՄԻՇԷՆ ԵՒ ԶԸՐԻՉԻՆ: II. ԼՈՒՍԱՆԿԱՐԸ (վիպակներ մէկ գրքոյկի մէջ), Ալէքսանդրիա, 1906, Գի՞ն 25 Սանթիմ:
- 9.— III. ՃԱԿԱՏԱԳԻՐ, Ալէքսանդրիա, 1906, Գի՞ն 25 Սանթիմ:

### ԵՒ ՊԻՏԻ ԼՈՅՍ ՏԵՄԵՆՆ

- IV. ՎԱՐՁՆՊԵՏԻՆ ՊՂԱՏՈՆԱԿԱՆ ՍԷՐԸ:
- V. ՎԱՌԹ:
- VI. ԱՏՐՈՆԷ:
- VII. ՄԻՐՈՅ ԶՈՏԵՐԸ:
- VIII. ՄՈՂՈՒԹԵԱՆ ԶՈՏԸ:
- IX. ՄԵԼՔՈՆ ԲԷՆԵԱ:

ՀՀ Ազգային գրադարան



NL0372260

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Չանագան ժամանակներու և զանագան թերթերու մէջ լոյս տեսած մեր վիպական գրածքները լեզական և այլ թեթև բարեփոխումներով և վիպական հաշարածոյ ընդհանուր վերնագրի տակ հետզհետէ առանձին գրքոյկներով պիտի հրատարակենք, անոնց նախապէս հրատարակած թւականներու կարգովը:

Այս գրքոյկները պիտի վաճառուին թիֆլիսի գրավաճառներուն մօտ և հետևեալ տեղերը՝

Պօրթօ— Մ. Սատոյեան, 27 Beach st.

Ֆիլիպի— «Ռազմիկ»ի խմբագրատունը.

Սարմատ— Ստեփան թաղէոսեան.

Թաշրիզ— Տօքթ. Պ. Ասլանեան.

Եգիպտոս— Մեր մօտ՝

Le Docteur Paschayan-Khan  
Alexandrie (Egypte)

Տասը օրինակէն աւելի գնողներուն 100ին 10 զեղջ պիտի ըլլայ, եթէ ուղղակի մեզ ղիմեն և փոխարժէքը կանխիկ վճարեն:

ՏՕԲԹ. Կ. ՓԱՇԱՅԱՆ

23 Ապրիլ 1906

Աղերսանդրիս